

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրաւէրով, 1987 թուականի սեպտեմբերի 4—7 օրերին հիւրաբար Մայր Աթոռում էին գտնուում Միացեալ Նահանգների քրիստոնէական տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչներ՝ ղեկավարութեամբ աստուածաբանութեան դոկտոր, պրոֆեսոր հոգեշնորհ Բրուս Ոիգդոնի:

ԱՄՆ-ի Քրիստոնեայ Եկեղեցիների Ազգային Խորհուրդը ներկայացնող այս խումբը Սովետական Հայաստան էր ժամանել ՍՍՀՄ—ԱՄՆ եկեղեցական յարաբերութիւնների ծրագրի համաձայն՝ մօտիկից ծանօթանալու նաև Հայաստանեայց Առաքելական Եկեղեցուն, նրա եկեղեցական կեանքին և հաւատացեալներին՝ էկումենիկ ոգով:

Խումբը Մոսկուայից Երևան ժամանեց սեպտեմբերի 4-ին և ծանօթացաւ Երևան քաղաքի տեսարժան վայրերին:

Սեպտեմբերի 5-ին խումբն այցելեց Մատենադարան, ապա ուղևորուեց Գառնիի հեթանոսական տաճար, որից յետոյ սքանչացաւ Ս. Գեղարդ վանքի համալիրով, ուր և արժանացաւ ջերմ հիւրասիրութեան: Երեկոյեան մեծ հետաքրքրութեամբ ունկնդրեց Ա. Տիգրանեանի «Անուշ» օպերան:

Սեպտեմբերի 6-ին, կիրակի: Հիւրերը այցելեցին Մայր Աթոռի Գանձատուն, մասնակցեցին սուրբ պատարագին և բարեպաշտ զգացումներով ստացան սուրբ հաղորդութիւն:

Յաւարտ սուրբ պատարագի մէկժամեայ հանդիպում ունեցան Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետի հետ: Նորին Սրբութիւնը հիւրերին ծանօթացրեց Հայ Եկեղեցու պատմական անցեալին, ներկային և ապագայ եկեղեցաշէն ծրագրերին:

Այս առթիւ աշխոյժ զրոյց ծաւալուեց ժողովուրդների բարեկամութեան և ատոմային պատերազմի կանխարգելման օգտին, Քրիստոսի Եկեղեցիների համատեղ գործակցութեամբ: Ելոյթներ ունեցան հոգեշնորհ Բրուս

Ռիգդոնը և կաթոլիկ ու բողոքական համայնքների ներկայացուցիչները: Ապա հիւրերը միաբանական սեղանատանը հաց կիսեցին Սուրբ Էջմիածնի միաբանութեան հետ՝ խանդավառ մթնոլորտում: Խմբի անդամները մեծ տպաւորութիւններով բաժանուեցին Մայր Աթոռից: Երեկոյեան նրանք դիտեցին Ա. Խաչատրեանի «Գայանէ» բալետը:

Սեպտեմբերի 7-ին խումբը այցելեց Ծիծեռնակաբերդ և ծաղկեփունջ զետեղեց 1915 թուականի ցեղասպանութեան զոհերի յուշարձանին: Տեղի ունեցաւ էկումենիկ աղօթք՝ անմեղ զոհերի հոգու հանգստեան համար: Ապա հիւրերը այցելեցին Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի և ներկայ եղան սուրբ պսակի արարողութեան:

Յետ միջօրէի ԱՄՆ-ի Քրիստոնեայ Եկեղեցիների Ազգային Խորհրդի ներկայացուցիչները մեկնեցին Թբիլիսի:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
7 սեպտեմբեր 1987 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄՆ-Ի ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ
(6 սեպտեմբերի 1987 թ.)